

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Դիւանի գրութիւն Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Կարապետ քահանայ Մանուկեանի անունով, որով յայտնուեց Նորին Սրբութեան օրհնութիւնն ու գոհունակութիւնը՝ Թաւրիզի վտանգի ժամանակ նորա բռնած դիրքի և Պարսկահայ գաղթականներին ցոյց տուած օգնութեան առթիւ։ 4 մարտի, թ. 351։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինօդին Աղէքսանդր Սարուխանի փոխադրած յօգուտ տաճկահայ գաղթականների ութսուն և ինն ռուբ. 07 կ. (89 ռ. 07 կ.) և առաջադրուեց անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 9 մարտի, թ. 372։

Նորին Սրբութեան մակագրութիւն ս. Էջմիածնի Սինօդի անդամներ Տ. Մատթէոս եպիսկոպոսի և Տ. Բարգէն վարդապետի մարտի 5-ի յայտարարութեան վրայ. «Ցանձնելով ս. Էջմիածնի Սինօդին յայտարարութեանս մէջ

յիշուած երկու արձանագրութիւնները (Մոսկուա տարած թանկարժէք իրերի), յանձնողական–ստացողական ստորագրութիւնները և երկու ցուցակները թէ՛ Մայր Աթոռի թանկարժէք իրերի և թէ՛ մատենադարանի ձեռագրերի՝ Սինոդիդ բոլոր անդամների ստորագրութեամբ, պատուիրում ենք կարգադրել անմիջապէս դնել Մայր Աթոռի ներքին գանձարան։ 9 մարտի, թ. 373։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Պետրոգրադի Ռուսական Արտաքին Առևտր. բանկի հեռագրով փոխադրած երկու հազար հինգ հարիւր քառասուն և երեք (2543) ռուբլին, որպիսի գումարն ուղարկուած է Ամերիկայի Նիւ–Եօրք քաղաքից, յօգուտ Ցաճկահայ գաղթականների և առաջադրուեց անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 9 մարտի, թ. 374։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Կարապետ Տեպինկենչեանի փոխադրած յօգուտ Ցաճկահայ գաղթականների երկու հարիւր վաթսուն ռուբ. 91 կոպ. (260 ռ. 91 կ.) և պատուիրուեց անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 9 մարտի, թ. 375։

Կոնդակ Ախալքալակի արժանապատիւ Տ. Յովհաննէս աւագ քահանայ Փաջազնունու և պ. պ. Միքայէլ Այվազեանի, Յովակիմ Շեխոյեանի, Խաչատուր Կարապետեանի, Մկրտիչ Մինասեանի, Վահան Կարապետեանի և Յովհաննէս Դարբինեանի անունով, որոնք հաստատուեցին Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անդամակցութեան պաշտօնի մէջ։ 9 մարտի, թ. 376։

Շրջաբերական կոնդակներ Երևանի փոխ-թեմակալի, Վրաստանի, Շամախու, Աստրախանի թեմակալ առաջնորդների և Ղարաբաղի թեմի ժամ. կառավարչի անունով, որով առաջադրուեց, ի նկատի ունենալով տարածուած համաճարակ հիւանդութիւնները, իրենց հայեցողութեամբ, այս տարուայ մայիսի 1-ից դադարեցնել հայոց եկեղեցական-ծխական դպրոցների պարապմունքները, որտեղ վտան-

գաւոր է հիւանդութեան կողմից։ 9 մարտի։ թ. թ. 380—384։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Գրոզնայի Առևտրական բանկի կառավարիչ և տեղական ցանձնաժողովի գանձապահ Էմ. Ղարիբեանի գաղթականների օգտին փոխադրած մի հազար երկու հարիւր (1200) ռուբլին և պատուիրուեց ստացման անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 10 մարտի։ թ. 385։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Ամերիկայից Եղիա Գատէմիշեանի փոխադրած իննսուն եօթ ռուբ. 17 կոպ. (97 ռ. 17 կ.) և պատուիրուեց մուծել մտից մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել նուիրատուին։ 10 մարտի։ թ. 386։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Տ. Գարեգին վարդապետի միջոցով պ. Օնիկ Մատակեանի նուիրած յիսուն (50) ռուբլին յօգուտ գաղթականների և պատուիրուեց ստացման անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 10 մարտի։ թ. 387։

Կոնդակ Վրաստանի հայոց թեմի Առաջնորդի անունով, որով նկարագրելով Գայիանեան Օրիորդաց դպրոցի նիւթական անձուկ վիճակը՝ պատուիրուեց մոմավաճառութեան արդիւնքից տարեկան երեք հազար (3000) ռուբլի տալ Գայիանեան դպրոցին, որպէս զի հնարաւորութիւն ունենայ ճշտութեամբ կատարել իւր օգտաւէտ կոչումը՝ հայ օրիորդներ դաստիարակելու գործում։ 10 մարտի։ թ. 388։

Դիւանի գրութիւն Տփխիսի Գայիանեան Օրիորդաց դպրոցի Հոգաբարձութեան անունով, որով ուղարկուեց ի գիտութիւն Նորին Սրբութեան թ. 388 կոնդակի վաւերական պատճէնը։ 10 մարտի։ թ. 389։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Սպահանից փոխադրած յօգուտ հայ

գաղթականների երկու հազար (2000) ռուբլին և յանձնարարուեց անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 10 մարտի, թ. 393։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Սպահանից փոխադրած յօգուտ հայ գաղթականների մի հազար (1000) ռուբլի։ 10 մարտի, թ. 394։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Կախ-աւանի Մելքիսեդեկ քահանայ Սրբդրեանի մարտի 5-ի թ. 17 յայտարարութեամբ ներկայացրած յօգուտ հայ գաղթականների յիսուն չորս (54) ռուբլին և պատուիրուեց անդորրագիր ուղարկել նուիրատուին։ 11 մարտի, թ. 396։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Պետրոգրադի Ռուսական Արտաքին Առևտր. բանկի միջոցով փոխադրած Ամերիկայի Նիւ-Եորք քաղաքից յօգուտ հայ գաղթականների եօթն հարիւր ութսուն (780) ռուբլին և յանձնարարուեց անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 11 մարտի, թ. 397։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Իալթայի ժամանակաւոր Կոմիտէի ուղարկած հինգ հարիւր (500) ռուբ. և Խարկովի Սրապիոն քահանայ Սամուէլեանի ուղարկած հինգ հարիւր (500) ռուբ., ընդամենը մի հազար (1000) ռուբլի, պատուիրուեց առանձին-առանձին մուտք գրել մոլոց մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելեաց։ 13 մարտի, թ. 400։

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Տփխիսի Ազգային բիւրոյի փոխ-նախագահ պ. Յովսէփ Խունունցին՝ Ամերիկայի Հեշուէ քաղաքի Սերաստիայի Ուլաշ գիւղի Յանձնախմբի ուղարկած հայ կամաւորների օգտին չորս հարիւր յիսուն ռուբ. 7 կ. (450 ռ. 7 կ.) և խնդրուեց ստացման անդորրագիրն ուղարկել Դիւան՝ յիշեալ Յանձնախմբին ուղարկելու համար։ 13 մարտ, թ. 407։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Տ. Եփրեմ եպիսկոպոսի միջոցով ստացուած Զանգեզուրի շրջանի Շիւանի ձորի Դաւիթ քահանայ Տէր Ազարեանից յօգուտ հայ գաղթականների 76 ռ. 18 կոպ. և պատուիրուեց անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 16 մարտի, թ. 417։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Իւզովկայի Կարապետ քահ. Դաւթեանի գաղթականների օգտին փոխադրած երկու հարիւր (200) ռուբ. և պատուիրուեց անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 16 մարտի, թ. 418։

Դիւանի գրութեամբ յայտնուեց պ. Գրիգոր Բ. Զալխուշեանին Վեհափառ Հայրապետի օրհնութիւնն ու գոհունակութիւնը՝ նորա ուղարկած «Մտքեր, Խոհեր և Դէմքեր» գրքի համար։ 16 մարտի, թ. 423։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Պարսկահնդկաստանի Առաջնորդական Խորհրդարանի և Ազգային վարչութիւնների անունով՝ հայ փախստական-գաղթականների օգտին հանգանակած և ուղարկած հինգ հազար (5000) ռուբ. առթիւ։ 17 մարտի, թ. 425։

Կոնդակ Տփխիսի Հայկական Կենդրոնական Կոմիտէի անունով, որով առաջադրուեց Վսեմափայլ Պօղոս փաշա Նուպարի փոխադրած 20,000 ռուբ., որ պիտի գործադրուի Նորին Սրբութեան կարգադրութեամբ, փոխադրել Աղէքսանդրապոլի Եղբայրական Օգնութեան Ճանձնաժողովին — 10,000 ռուբլի, Երևանի Ճանձնաժողովին — 5000 ռ., Ախալքալակի Ճանձնաժողովին — 3000 ռ. և Նոր-Բայազիտի Ճանձնաժողովին — 2000 ռուբլի։ 18 մարտի, թ. 426։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան տիկին Եղիսաբէթ Բուդպեանի անունով՝ ս. Էջմիածնի Մայր Տաճարի գործածութեան համար երկու փութ կնտրուկ և այլ նուիրաբերութեան և իւր ջերմեռանդ վերաբերմունքի համար։ 18 մարտի, թ. 427։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինօդին Տ. Դարեգին վարդապետի միջոցով ստացուած Հնչեշտի Յովհաննէս քահանայ Աբրահամեանի ուղարկած Քսան և չորս (24) ռուբլին՝ յօգուտ գաղթականների, պատուիրելով մուտք գրել և անդորրագիրն ուղարկել նուիրատուին: 18 մարտի, թ. 428:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Մայր Աթոռի մատենադարանապետ Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսին՝ մատենադարանում պահելու համար Քէշիշքենդցի Եղիա Աւետիսեանի նուիրած ձեռագիր մաշտոցը: 19 մարտի, թ. 438:

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան գլխաւոր կարգադիր Յանձնաժողովին ստանալ Սինօդից գաղթականների գումարից հինգ հազար (5000) ռուբլի և փոխադրել Երևանի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովին: 19 մարտի, թ. 440:

Կոնդակ Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսին, որով թոյլ տրուեց, իւր գրաւոր միջնորդութեան համաձայն, աբեղայ ձեռնադրել Սևանայ վանքի միաբան Աստուածատուր սարկաւագ Վարդանեանին: 19 մարտի, թ. 452:

Նորին Ս. Օծութեան մակագրութիւն ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովի թ. 45 յայտարարութեան վրայ, «Միանգամայն անհրաժեշտ և օգտակար համարելով «Եղբայրական Օգնութեան» անունով պարբերական հրատարակութիւն ունենալ Մայր Աթոռում, պատուիրում ենք ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովին շուտով ձեռնարկել և հրատարակել համաժողովում կարդացուած տեղեկագիրները, զեկուցումները, արձանագրութիւնները, վիճակագրութիւնը, հաշուետուութիւնը և փախստական-գաղթականաց պահպանութեան, վերադարձի և

նոցա իսպառ քայքայուած տնտեսութեան վերականգնման վերաբերեալ ծրագիրները և վերջնական եզրակացութիւնները»։ 21 մարտի, թ. 461։

Երջաբերական կոնդակներ բոլոր Առաջնորդների, փոխանորդների, Հոգևոր Կառավարութիւնների, գործակալների, աւագ քահանաների, բարեգործական և այլ աստուածահաճոյ ընկերութիւնների և հաստատութիւնների, երեսփոխանների, ծխական հոգաբարձութիւնների, թաղական խորհուրդների և այլ մարմինների անունով, որով նկարագրելով հայ գաղթականների տնտեսական ծանր կացութիւնը և յայտնելով ս. Էջմիածնում Կենդրոնական մարմնի հաստատուելը — յորդորուեց դրամական նպաստով օգնել իրենց հարազատ եղբայրներին և քոյրերին։ 21 մարտի, թ. 462։

Նորին Սրբութեան մակագրութիւն Երևանի Առևտրական բանկի մարտի 19-ի գրութեան վրայ. «Ամերիկայի Բոստոն քաղաքից Մուշեղ Արքեպիսկոպոսի, Արսէն Ծ. վարդապետի և փաստաբան Սուպլիի փոխադրած 11305 ռուբ. վաճառականական բանկը Մեր պատուէրով փոխադրել է Երևանի առևտրական բանկի միջոցով Մեր անունով։ Այդ գումարը դրուած է Սինօդիդ անունով յիշեալ Առևտրական բանկում ընթացիկ հաշուով։ Կցելով սրան Տփխիսի վաճառականական բանկի գրութիւնը, պատուիրում ենք (Սինօդին) մուծել մտից մատեան յօգուտ գաղթականաց և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 24 մարտի, թ. 484։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինօդին Տփխիսից պ. Ս. Կիւլպէնկեանի միջոցով փոխադրած յօգուտ հայ գաղթականների հինգ հազար (5000) ռուբլին և պատուիրուեց մտից մատեան մուծելուց յետոյ անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 25 մարտի, թ. 491։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինօդին Նիւ-Եորքի Ռիչարդ Ընկերութեան փոխադրած յո-

գուտ հայ գաղթականների ութ հազար (8000) ռուբլին և պատուիրուեց մուծել մտից մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 25 մարտի, թ. 492:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Իզդիրի նոտար պ. Տիգրան Ասֆարեանի միջոցով փոխադրած յօգուտ հայ գաղթականների երկու հարիւր եօթանասուն երեք ռուբ. 27 կոպ. (273 ռ. 27 կոպ.) և պատուիրուեց մատեան մուծել և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 26 մարտի, թ. 513:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ադէքսանդր Ոսկեանի միջոցով ստացուած յօգուտ հայ գաղթականների տասն (10) ռուբլին և պատուիրուեց մատեանի մէջ մուծելուց յետոյ անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 26 մարտի, թ. 514:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Եւպատորիայի Հայոց Յանձնաժողովի փոխադրած յօգուտ հայ գաղթականների մի հարիւր քսան (120) ռ. և պատուիրուեց մուծել մտից մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 26 մարտի, թ. 515:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Պետրոգրադից Էմիլիա Վ. Ստիրիի փոխադրած յօգուտ հայ գաղթականների իննսուն (90) ռուբլին և պատուիրուեց մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել նուիրատուին: 26 մարտի, թ. 516:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Յովհաննէս (Իվան) Տէր Սիմէոնեանի փոխադրած յօգուտ հայ գաղթականների յիսուն (50) ռուբլին և պատուիրուեց մուծել մտից մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 26 մարտի, թ. 517:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Նիկոլայ Իստոմինի հայ գաղթականների օգտին նուիրած տասն և հինգ (15) ռուբլին և պատուիրուեց

մուծել մտից մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 26 մարտի, թ. 518։

Կոնդակ նոյն Սինոդի անունով, որով ծանուցանելով, որ համաձայն Տ. Եփրեմ եպիսկոպոսի հրաժարականի, վերջինիս ազատ համարելով Մայր Աթոռի Վանական Կառավարութեան նախագահի պաշտօնից, որպիսի պաշտօնը յանձնուեց Տ. Անանիա արքեպիսկոպոսին, առաջադրուեց հարկաւոր տնօրէնութիւն անել, ինչպէս և Անանիա արքեպիսկոպոսի յաւելեալ ռոճկի առթիւ առաջիկայ ապրիլի 1-ից։ 26 մարտի, թ. 520։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Յովակիմ Յովհաննիսեանի հայ գաղթականների օգտին փոխադրած հինգ (5) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 27 մարտի, թ. 530։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Պետրոգրադի Ռուսական Արտաքին Առևտ. բանկի միջոցով ստացուած յօգուտ հայ գաղթականների երկու հարիւր տասն և երկու ռուբ. 75 կոպ. (212 ռ. 75 կ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 28 մարտի, թ. 531։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Տագանրոգի «Սոկոլ» Ընկերութեան միջոցով ստացուած յօգուտ հայ գաղթականների վեց հարիւր (600) ռուբլին, պատուիրելով մուծել մտից մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 27 մարտի, թ. 532։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնելով Սինոդին Աստրախանի Հայկական Կոմիտէի ուղարկած մի հազար ռուբլին (1000 ռ.) № 290751 Ազովսկի բանկի փոխանակագիրը, առաջադրուեց այդ գումարը ստանալ բանկից, մուտք գրել յօգուտ հայ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 27 մարտի, թ. 533։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սի-

նօղին Պետրոգրադի Արտաքին Առևտրի բանկի միջոցով Նիւ-Եօրքից Միհրան Սարոյեանի հաշուին՝ 1523 ռուբլին յօգուտ հայ գաղթականների, պատուիրելով մուծել մտից մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 27 մարտի, թ. 534։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինօղին Ախալցխայի Փոխանորդ Տ. Իսահակ վարդապետի միջոցով ներկայացրած՝ նուիրած Ախալցխայի հայազգիներից յօգուտ հայ գաղթականների մի հարիւր յիսուն եօթ ռուբ. 27 կոպ. (157 ռ. 27 կ.), պատուիրուեց մուտք գրել մատեանում և անդորրագիր ուղարկել ըստ պատկանելոյն։ 28 մարտի, թ. 551։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինօղին վճարել գաղթականների օգտին ստացուած գումարից ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովին քսան հազար (20,000) ռուբլի գաղթականների պէտքերը հոգալու համար։ 30 մարտի, թ. 553։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնելով Սինօղին Օդեսայից պ. Պոպովի փոխադրած մի հազար (1000) ռուբլին յօգուտ հայ գաղթականների, պատուիրուեց մուծել մտից մատեան և անդորրագիրն ուղարկել նուիրատուին։ 31 մարտի, թ. 558։

Կոնդակ Ախալքալակի գաւառի Զիկրաշէն գիւղի ծխական Հոգաբարձութեան անունով, որով հաստատելով նոյն գիւղի ծխական դպրոցի բացումը, օրհնութիւն և գոհունակութիւն հոգաբարձութեան և հայ համայնքին։ 1 ապրիլի, թ. 566։

Նոյն բովանդակութեամբ կոնդակ Ախալքալակի գաւառի Առաքել գիւղի ծխական Հոգաբարձութեան անունով։ 1 ապրիլի, թ. 567։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինօղին Իօզղադից (Կիլիկիա) փոխադրած յօ-

գուտ հայ գաղթականների մի հազար վեց հարիւր յիսուն երեք (1653) ռուբլին, պատուիրելով մուծել մտից մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 1 ապրիլի, թ. 568։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Բուենկո-Այրէս քաղաքից հայ գաղթականների օգտին փոխադրած մի հազար երկու հարիւր տասն (1210) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 1 ապրիլի, թ. 569։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Բագուից պ. Աղաբէգ Սերեբրեկեանի յօգուտ հայ գաղթականների փոխադրած հինգ հարիւր վաթսուն ռուբ. 12 կ. (560 ռ. 12 կ.), պատուիրելով մուծել մտից մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 1 ապրիլի, թ. 570։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ռումինիայի Կոնստանցա քաղաքից Ջամբազեանի փոխադրած յօգուտ հայ գաղթականների երեք հազար (3000) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 1 ապրիլի, թ. 571։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Մոսկուայից պ. Բաղդասար Արզումանեանի փոխադրած յօգուտ հայ գաղթականների հինգ հազար (5000) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 1 ապրիլի, թ. 572։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Սարատովի Հայոց Բարեգործական Ընկերութեան փոխադրած յօգուտ հայ գաղթականների երկու հազար հինգ հարիւր քառասուն վեց ռուբ. 87 կ. (2546 ռ. 87 կ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 1 ապրիլի, թ. 573։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Տաշքենդի Հայոց Կանանց ընկերութեան փոխադրած յօգուտ հայ գաղթականների մի հազար (1000) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 1 ապրիլի, թ. 574:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Պետրոգրադի Հայոց Եկեղեցական Խորհրդի փոխադրած յօգուտ գաղթականների վերադարձի քսան և հինգ հազար (25,000) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 1 ապրիլի, թ. 575:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Թերմեզի Յանձնաժողովի Հայ գաղթականների օգտին փոխադրած մի հարիւր քսան (120) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 1 ապրիլի, թ. 576:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Մոսկուայից պ. Թորոսեանի (Տարասեան) փոխադրած Հայ գաղթականների օգտին չորս հազար (4000) ռուբլին, պատուիրելով մուտք դրել և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 3 ապրիլի, թ. 588:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Վառնայի Թաղական Խորհրդի փոխադրած յօգուտ Հայ գաղթականների չորս հազար եօթ հարիւր քսան (4720) ռուբլին, պատուիրելով մուծել մտից մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 7 ապրիլի, թ. 596:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Լոնդոնից Յակոբեանի փոխադրած յօգուտ Հայ գաղթականների տասն և մի հազար երեք հարիւր յիսուն (11,350) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 7 ապրիլի, թ. 597:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ռումինիայի Կոնստանցա քաղաքից պ. Զամբակլեանի փոխադրած յօգուտ հայ գաղթականների ինն հարիւր ութսուն և հինգ (985) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 7 ապրիլի, թ. 598։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Օդեսայից փոխադրած յօգուտ հայ գաղթականների տասն հազար (10.000) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 7 ապրիլի, թ. 599։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ղարսի Հայոց փոխանորդ Տ. Երեմիա վարդապետի փոխադրած հայ գաղթականների օգտին իննսուն և երեք ռուբ. 51 կոպ. (93 ռ. 51 կ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 7 ապրիլի, թ. 600։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին հայ կամաւորների օգտին փոխադրած Մոզդոկի Գէորգ քահ. Խարիմեանի և Կ. Շլթեանի վաթսուն և վեց (66) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 6 ապրիլի, թ. 601։

Նորին Սրբութեան մակագրութիւն ս. Էջմիածնի Սինոդի ապրիլի 6-ի թ. 463 յայտարարութեան վրայ. «Ուղարկելով սորա հետ տպագրած նոր Մխական Կանոնադրութիւնից մի օրինակ, պատուիրում ենք ս. Էջմիածնի Սինոդին նախ՝ այսուհետև առաջնորդուել ըստ ամենայնի ծխական այդ նոր Կանոնադրութեամբ, երկրորդ՝ նոր Կանոնադրութեան կցած ծրագրով քահանայացուներին քննելը պարտադիր դարձնել 1916 թ. յունուարի 1-ից առանձին յանձնաժողովում, որի համար ժամանակին յատուկ կարգադրութիւն կանենք. իսկ մինչ այն ժամանակ հին ծրագրով տիրացուներին քննելու գործը յանձնել ա-

ռաջնորդներին, որ նոքա ըստ իրենց բարեհայեցողութեան կազմեն ցանձնաժողով՝ քննելու քահանայացուներին ցմին յունուարի 1916 թ., տալով նոցա պատշաճ վկայական։ 8 ապրիլի, թ. 618։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Սինոդին վճարել գաղթականների գումարից ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր ցանձնաժողովին քսան հազար (20,000) ռուբլի՝ անհրաժեշտ ծախքերի համար։ 10 ապրիլի, թ. 623։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Մեծ-Սալայի Հայկական Կոմիտէի հայ գաղթականների օգտին փոխադրած մի հազար հինգ հարիւր (1500) ռուբլին, պատուիրելով մուծել մտից մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 10 ապրիլի, թ. 624։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Աբասթումանի քահանայի և տեղի Բարեգործական Ընկերութեան հայ գաղթականների օգտին փոխադրած վաթսուն (60) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 10 ապրիլի, թ. 625։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ասխաբադից Շուշանիկ Մամիկոնեանի միջոցով ստացուած յօգուտ հայ կամաւորների վաթսուն և հինգ (65) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն 13 ապրիլի, թ. 640։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Մերվի փոխադարձ Վարկի Ընկերութեան միջոցով փոխադրած յօգուտ հայ գաղթականների երկու հարիւր (200) ռուբլին, պատուիրելով մուծել մտից մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 13 ապրիլի, թ. 641։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սի-

նոցին Ա. Ե. Կոլլսոցիսայի փոխադրած հայ գաղթականների օգտին երեք հարիւր վաթսուն և չորս ռուբ. 70 կ. (364 ռուբ. 70 կ.) պատուիրելով մուտք գրել և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 14 ապրիլի, թ. 649։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոցին Ալթունջիի փոխադրած յօգուտ հայ գաղթականների մի հազար (1000) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 14 ապրիլի, թ. 650։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոցին Նովոչերկասկի պ. Վահան Պապոյեանից ստացուած յօգուտ հայ գաղթականների մի հազար (1000) ռուբլին, պատուիրելով մուտք գրել և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 14 ապրիլի, թ. 651։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոցին արտասահմանից փոխադրած յօգուտ հայ գաղթականների 793 ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 14 ապրիլի, թ. 652։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոցին Պետրոգրադի Ցանձնաժողովի փոխադրած գաղթականների օգտին եօթանասուն և եօթ հազար (77000) ռ., պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 14 ապրիլի, թ. 653։

Դիւանի գրութեամբ ուղարկուեց «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելեանին 3409 ռուբ. 10 կոպ. Տփխիսի Առևտրական բանկի Երևանի բաժանմունքի թ. 32135 փոխանակագիրը. այդ գումարն ուղարկուած է Նորին Սրբութեան անունով Ամերիկայի Ազգային պաշտպանութեան Ցանձնաժողովից՝ յօգուտ «Հնչակեան» հայ կամաւորների։ 14 ապրիլի, թ. 654։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Մայր Տաճարի լուսաբարապետ Տ. Ղևոնդ եպիսկոպոսին

իւր հսկողութեամբ տպագրել ս. Էջմիածնի 1916 թ. օրացոյցը, որ կազմել է Տ. Արիստակէս վարդապետը։ 17 ապրիլի, թ. 665։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Ամերիկայի Ռիչմոնդ քաղաքի հայ Օժանդակ Մարմնի վարչութեան փոխադրած յօգուտ հայ գաղթականների մի հարիւր յիսուն և հինգ ռուբ. 45 կոպ. (155 ռ. 45 կոպ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 ապրիլի, թ. 684։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Զաքար Մելիք-Բարամեանի միջոցով ստացուած յօգուտ հայ գաղթականների մի հարիւր (100) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 ապրիլի, թ. 685։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ախարադի Կանանց Բարեգործական Ընկերութեան նախագահ Շուշանիկ Մամիկոնեանի փոխադրած յօգուտ հայ կամաւորների տասն և մի ռուբ. 28 կոպ. (11 ռուբ. 28 կ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 ապրիլի, թ. 686։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Դերբենդի հայոց Ցանձնաժողովի փոխադրած յօգուտ հայ գաղթականների չորս հարիւր յիսուն (450) ռ., պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 ապրիլի, թ. 687։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Ա. Ե. Կոլլոդիասայի փոխադրած յօգուտ հայ գաղթականների երեք հարիւր վաթսուն և վեց ռուբ. 47 կ. (366 ռ. 47 կ.), պատուիրելով անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 ապրիլի, թ. 688։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Վարդաշէնի Ծխական Հոգաբարձութեան ստանալ Հոգաբարձութեան

նախագահ Ալէքսան Էսիրեանից Բագուարնակ Համբարձում Ազարեանի դպրոցին նուիրած երկու հազար հինգ հարիւր (2500) ռուբլին և տոկոսով դնել որ և է դրամական հաստատութեան մէջ ի պահ։ 18 ապրիլի, թ. 690։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Մինոգին Եալթայի ժամանակաւոր կոմիտէի փոխադրած յօգուտ հայ գաղթականների հինգ հարիւր (500) ռուբլին, պատուիրելով անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 20 ապրիլի, թ. 694։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Մինոգին Ամերիկայից փոխադրած յօգուտ հայ կամաւորների երկու հազար չորս հարիւր ութսուն հինգ (2485) ռուբ., պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 20 ապրիլի, թ. 695։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Մինոգին Պետրոգրադի Յանձնաժողովի գանձապահ Յակոբ Ղուկասեանի փոխադրած յօգուտ հայ գաղթականների քառասուն և եօթ հազար (47,000) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 20 ապրիլի, թ. 696։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Մինոգին Պօղոս փաշա Նուպարի փոխադրած յօգուտ հայ գաղթականների տասն հազար (10,000) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 20 ապրիլի, թ. 697։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Մինոգին Խարկովի Սրապիոն քահանայ Սամուէլեանի հայ գաղթականների օգտին փոխադրած չորս հարիւր (400) ռ., պատուիրելով մատեան մուծել և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 20 ապրիլի, թ. 698։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Մինոգին Սևաստոպոլից փոխադրած յօգուտ հայ կամաւորների 800 ռ. և գաղթականների 1600 ռուբլի, ընդամենը

երկու հազար չորս հարիւր (2400) ռուբլի, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 20 ապրիլի, թ. 699։

Դիւանի գրութիւններ Երևանի փոխ-թեմական, Վրաստանի, Շամախու և Աստրախանի թեմական Առաջնորդների և Ղարաբաղի թեմի ժամանակաւոր կառավարչի անունով, որոնցով ուղարկելով Կոյրերի Հոգաբարձութեան Նախագահուհի Պայծառափայլ Կոմսուհի Ելիզաւետա Վորոնցովա Դաշկովայի թ. 72 գրութեան պատճէնները՝ յանձնարարուեց կարգադրել բոլոր հայոց եկեղեցիներում գանձանակ շրջեցնել կոյրերի օգտին և գոյացած դրամն ուղարկել Կուրաց Հոգաբարձութեան Խորհրդին։ 21 ապրիլի, թ. թ. 700—704։

Նորին Սրբութեան գրութեամբ յայտնուեց Կուրաց Հոգաբարձութեան Նախագահուհի Պայծառափայլ Կոմսուհի Ելիզաւետա Վորոնցովա-Դաշկովային, որ պատուիրուեց բոլոր թեմական Առաջնորդներին՝ կոյրերի օգտին գանձանակ շրջեցնելու համար։ 21 ապրիլի, թ. 705։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Երևանի փոխ-թեմական Տ. Խորէն եպիսկոպոսին, Նորա միջնորդութեան համաձայն, վարդապետական աստիճան տալ Նոր-Բայազիտի գործակալ Տ. Ռուբէն աբեղային։ 23 ապրիլի, թ. 723։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Եւպատորիայի Բարեգործական Ընկերութեան փոխադրած յօգուտ հայ գաղթականաց 157 ռուբ. 47 կոպ. գումարը։ 24 ապրիլի, թ. 728։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Ցանձնաժողովին ուղարկել գաղթականների գումարից Երևանի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովին հինգ հազար (5000) ռուբլի։ 26 ապրիլի, թ. 739։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց

ս. Էջմիածնի Սինոդին վճարել ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովին՝ գաղթականների գումարից երեսուն հազար (30,000) ռուբլի։ 25 ապրիլի, թ. 740։

Շրջաբերական Կոնդակներ Ռուսահայոց բոլոր թեմակալ Առաջնորդների անունով, որոնցով ուղարկելով Հայաստանեայց եկեղեցու նոր «Մխոական Կանոնադրութիւնը», բաղկացած 73 յօդուածից և ընծայացուների հրահանգութեան ծրագրից, առաջադրուեց՝ պատուիրել կոնսիստորիաներին, փոխանորդներին, Հոգևոր Կառավարութիւններին, գործակալներին, երեսփոխաններին, եկեղեցական հոգաբարձութիւններին, դպրոցներին և թեմերի բոլոր պաշտօնեաներին, որ նոր «Մխոական Կանոնադրութիւնը» ի կատար ածեն ամենայն ճշտութեամբ և պարտաճանաչութեամբ։ 28 ապրիլի, թ. թ. 754—759։

Կոնդակ Վրաստանի Հայոց թեմի Առաջնորդ և Ներսիսեան Դպրանոցի Հոգաբարձութեան նախագահի անունով, որով հաստատուեցան Հոգաբարձութեան նորընտրեալ անդամներ՝ պ. պ. Աւետիք Մահակեան, Գարեգին Դարգիշեան, Միքայէլ Մուշայեան, Յովսէփ Ամիրխանեան, բժիշկ Յովհաննէս Իգիտեան և Ռուբէն Յովհաննիսեան. անձնափոխանորդի պաշտօնում՝ պ. Արամայիս Երզնկեան. իսկ վերստուգիչ Յանձնաժողովի անդամներ՝ պ. պ. Մելքոն Ա.Ֆրիկեան, Գրիգոր Ջաղէթեան և Հայկ Տէր Աստուածատրեան։ Նոր հաստատուած անդամների ժամանակաշրջանը չորս տարի է։ 29 ապրիլի, թ. 765։

Նորին Ս. Օծութեան մակադրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովին վճարել Ատրպատականի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսին գաղթականների օգտին ստացուած գումարից տասն հազար (10,000) ռուբլի։ 30 ապրիլի, թ. 767։